«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2017 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ գիտական խորհուրդն **արձանագրում է.** 2016-2017 թթ. ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական, կրթական, գիտական, հետազոտական, կազմակերպական, մեթոդական, կրթության որակի ապահովման, միջազգայնացման ու հանրային բնույթի աշխատանքներ, որոնք նպատակ են ունեցել ապահովել մասնաճյուղի բնականոն գործունեությունը և օժանդակել են ուսումնագիտական համակարգի զարգացմանը:

Ուսումնական գործընթացը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպվել է «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար կառավարում» և «Ֆինանսներ» (առաջին կուրսեցիների դեպքում՝ «Գործարար վարչարարություն» և «Հանրային ֆինանսներ») մասնագիտություններով՝ ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան: Բոլոր ստուգարքներն ու քննություններն առկա ուսուցման համակարգում անցկացվել են թեստային, բանավոր, թեստային-գրավոր, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ բանավոր ձևերով: 2017 թվականի ամփոփիչ բոլոր ատեստավորումները կկազմակերպվեն մասնաճյուղում, որի շրջանակներում ամփոփիչ ատեստավորմանը կմասնակցեն տեսական դասընթացն ավարտած բակալավրիատի 53 (որից 18-ը՝ հեռակա) և մագիստրատուրայի 27 ուսանողներ:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղի գործունեության մեջ կարևորվել են միջազգային գործընկերների հետ հարաբերությունների հաստատման և տեղական ու միջազգային կառույցների համագործակցությամբ հետազոտությունների ընդլայնման ուղղությամբ իրականացված աշխատանքները, որոնց շրջանակներում պատրաստվել են գիտական ու կրթական ուղղություններ ունեցող դրամաշնորհային ծրագրերի փաթեթներ, հրատարակման են ներկայացվել միջազգային գիտաժողովներում տպագրվող հոդվածներ և սոցիալական ձեռնարկատիրությանն ու կրթության բարելավմանը վերաբերող հետազոտական և ուսումնամեթոդական նյութեր: Մասնաճյուղի գործունեության հանրայնացմանը և ուսանողների մարզամշակութային առօրյայի կազմակերպմանը նպաստել են ինչպես մայր բուհի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, այնպես էլ ուսանողական խորհրդի հետ իրականացվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի կողմից հրատարակվել է «ՀՀ մարզերի տնտեսության զարգացման հիմնախնդիրները» թեմայով գիտաժողովի

նյութերի ժողովածուն, պատրաստվել և կահավորվել է 90 ուսանողի համար նախատեսված դահլիճ, ապահովվել են միջազգայնացման գործընթացներ:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում տրամադրվել են ուսման վարձի զեղչեր, բազմաթիվ կազմակերպություններից բարձր առաջադիմության կամ սոցիալական ապահովության հիմքերով հատկացվել են կրթաթոշակներ, որոնք ընդգրկել են վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների մոտ 30 տոկոսին: Մեկ դասախոս և մեկ ուսանող մասնակցել են «Erasmus +» ծրագրին:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի ուսումնական, կազմակերպական, գիտական, վարչատնտեսական և հանրային գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին ու կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մասնաճյուղի 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) բարձրացնել ուսումնական, մեթոդական, կազմակերպական, վարչական ու գիտական աշխատանքների արդյունավետությունը՝ համագործակցելով ՀՊՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ.
   2) իրականացնել աշխատանքներ տարբեր կառույցների հետ գիտական ու կրթական ոլորտներում միջազգայնացման և առևտրայնացման հեռանկարներ ապահովելու ուղղությամբ.
   3) ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման հետ կապված գիտական ու հետազոտական աշխատանքներում:

3. **Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականները կենսագործելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

12.05.2017 թ.